

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ ՈՍԿԵՐԶՈՒԹՅՈՒՆ




world **skills**
international

Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպությունը, տեխնիկական հանձնաժողովի որոշմամբ, սահմանադրության, գործող կանոնակարգերի և մրցույթի կանոնների համաձայն այս հմտության մրցույթի համար ընդունել է հետևյալ նվազագույն պահանջները.

Տեխնիկական նկարագիրը կազմված է հետևյալից.

| | | |
|----|--|----|
| 1. | ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ..... | 3 |
| 2. | ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՈՐՏԸ..... | 4 |
| 3. | ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ..... | 9 |
| 4. | ՀՄՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... | 14 |
| 5. | ԳՆԱՀԱՏՈՒՄ..... | 15 |
| 6. | ՀՄՏՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ..... | 19 |
| 7. | ՆՑՈՒԹԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ..... | 19 |
| 8. | ՀՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՔԵԹՐՆԳԸ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ..... | 25 |

Ուժի մեջ է՝ 11. 10.11




Ջոն Շիլ

Ստեֆան Պրասկլ

Տեխնիկական հանձնաժողովի

Տեխնիկական հանձնաժողովի

նախագահ

փոխնախագահ

© Համաշխարհային Հմտություններ Միջազգային Կազմակերպությանը (ՀՀՄԿ) պատկանում են բոլոր իրավունքներն այն փաստաթղթերի նկատմամբ, որոնք մշակվել են Կազմակերպության համար կամ նրա անունից, ներառյալ թարգմանությունները և էլեկտրոնային տարածումը: Այս նյութը կարող է վերարտադրվել ոչ առևտրային մասնագիտական կրթության և ուսուցման նպատակներով պայմանով, եթե Համաշխարհային Հմտություններ Միջազգային Կազմակերպության ապրանքային նշանը և մտավոր սեփականության մասին նշումը մնում են տեղում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հմտության անունը և նկարագիրը

1.1.1 Հմտության անունն է

Ոսկերչություն

1.1.2. Հմտության նկարագիրը

Ոսկերիչները թանկարժեք մետաղներից ստեղծում են յուրօրինակ, գեղեցիկ և դիմացկուն զարդեր, տարբեր հաճախորդների համար: Նրանք աշխատում են տնտեսապես արդյունավետ կերպով, կատարում են նուրբ աշխատանք՝ այդուհանդերձ պահելով որակի բարձր մակարդակը:

Նրանք լավ կազմակերպված են և նախաձեռնող են: Ճիշտ սարքավորումների օգտագործումը և աշխատանքի անվտանգության և կայունության պահպանումը կարևոր է:

1.2 Կիրառման ոլորտը

1.2.1 Յուրաքանչյուր փորձագետ և մրցակից պետք է ծանոթ լինի այս Տեխնիկական նկարագրին:

1.2.2 Տեխնիկական նկարագրի տարբեր լեզուների առնչությամբ տարածայնությունների դեպքում անգլերեն տարբերակը գերակա է:

1.3 Կից փաստաթղթերը

1.3.1 Քանի որ սույն տեխնիկական նկարագիրը պարունակում է միայն տվյալ հմտությանը բնորոշ տեղեկատվություն, ապա այն պետք է օգտագործվի հետևյալ փաստաթղթերի հետ միասին

- ՀՀՄԿ մրցույթի կանոնները
- ՀՀՄԿ առցանց ռեսուրսները, ինչպես նշված է սույն փաստաթղթում
- Հյուրընկալող երկիր-առողջապահության և անվտանգության կանոններ
- Իրավասությունը և աշխատանքի ոլորտը

2. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏԸ

Մրցույթն իրենից ներկայացնում է այս հմտության հետ կապված իրավասությունների ցուցադրում և գնահատում: Փորձարկման նախագիծը պարունակում է միայն պրակտիկ աշխատանք:

2.1 Իրավասության դասակարգումը

Արտադրամասի կառավարումը

Մրցակիցը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ և հասկանա հետևյալը՝

- Նյութատեխնիկական պահանջները, որը հնարավորություն կտա իրականացնել փորձարկման նախագիծը
- Անձնական գործիքների և սարքավորումների օգտագործման պիտանելիության ստուգման գործընթաց
- Ոսկերչական իրերի պահպանման գործընթաց

Մրցակիցները պետք է կարողանան՝

- Գնահատել առանձին առաջադրանքներն ու աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ոսկերչական տարրերի, արտադրանքի և նորոգման համար, և ստանալ ոսկերչական ավարտուն գործեր
- Մեկնաբանել ոսկերչական տարրերի զծագրերը կամ ոսկերչական ավարտուն իրերը, ներառյալ՝ տեսքը կողքից, դետալների կտրվածքները և ուրվագծերը և որոշել հետևյալը՝
 - Նախագիծն ավարտելու համար անհրաժեշտ ժամանակը
 - Նյութեր, որոնք պետք է պատրաստվեն
 - Անհրաժեշտ սարքավորումը

Թանկարժեք մետաղների համաձուլվածքների պատրաստում

Մրցակիցը պետք է գիտելիք ունենա և հասկանա հետևյալը՝

- թանկարժեք մետաղների համաձուլվածքների բաղադրությունը և դրա հատկությունները:

Մրցակիցը պետք է կարողանա՝

- հաշվարկել անհրաժեշտ ազնիվ և թանկարժեք մետաղների և գունավոր մետաղների համամասնություններն ու չափը, որը պահանջվում է ցանկացած ճանաչված թանկարժեք մետաղների համաձուլվածքների նախօրոք որոշված քանակի համար:

- լցնել թանկարժեք մետաղների համաձուլվածքներն այնպես, որ մնացորդները հասնեն նվազագույն քանակության, այնպես, որ դրանք պատրաստ լինեն թանկարժեք զարդերի արտադրության համար:

Թանկարժեք մետաղների համաձուլվածքների պատրաստում զարդերի մասերի արտադրության համար

Մրցակիցը պետք է հստակ պատկերացում ունենա՝

- թանկարժեք մետաղների տեսակների, կիրառության և հատկությունների մասին,
- զարդերի տարածված ձևերի և դրանց կառուցվածքի մասին,
- մետաղների վերջնական տեսքի և դրանց կիրառության մասին,
- մետաղների պատրաստման և փոխակերպման տեխնիկաների մասին, որը կհամապատասխանի դիզայներական տարբեր պահանջներին:

Մրցակիցը պետք կարողանա՝

- պատրաստել նախօրոք սահմանված հաստության թիթեղ՝ օգտագործելով ձեռքով կամ էլեկտրականությամբ գործող գլանահաստոց*:
- պատրաստել նախօրոք սահմանված չափերի քառակուսի մետաղալար՝ օգտագործելով ձեռքով կամ էլեկտրականությամբ գործող գլանահաստոց*:
- պատրաստել քառակուսի կամ կլոր մետաղալար ըստ նախօրոք սահմանված տրամագծի/չափանմուշի՝ օգտագործելով նկարների նմուշները և նկարչական թիթեղները:

- պատրաստել անոթներ՝ ըստ նախապես սահմանված տրամագծի/ շաբլոնի, համապատասխան չափսերի և խտության մետաղական թիթեղից, օգտագործելով նկարների նմուշների բանկը, նկարչական թիթեղ և թանկարժեք մետաղների ձուլածոները:

Պարզ ոսկերչական տարրերի արտադրություն

Մրցակիցը պետք է հստակ պատկերացում ունենա

- ոսկերչական տարրերի մասին,
- այդ տարրերը կազմելու, պատրաստելու և ավարտին հասցնելու տեխնիկայի և մեթոդների մասին:

Մրցակիցը պետք է կարողանա՝

- թանկարժեք մետաղից թիթեղը կամ մետաղալարը կտրել կամ սղոցել ըստ պահանջված չափերի,
- կտրել և պատրաստել դեկորատիվ տարրեր, ինչպիսիք են օրինակ՝ զարդանկարները
- թանկարժեք մետաղից թիթեղը կամ մետաղալարը ձևավորել և ծռել՝ նախապես սահմանված ձևը տալու համար,
- մուրճով աշխատել, հղկել, ձևել կամ հարթեցնել համապատասխան հաստության մետաղական թիթեղը՝ օգտագործելով համատասխան գործիքներ

Բարդ տարրերի և ամբողջական ոսկերչական նմուշների պատրաստում՝ օգտագործելով միացման գոդման եղանակը

Մրցակիցը պետք է հստակ պատկերացում ունենա՝

- ոսկերչական բաղադրիչների/տարրերի մասին,
- տարրերի նախագծման, պատրաստման և ձևավորման տեխնիկաների և մեթոդների մասին:

Մրցակիցը պետք է կարողանա՝

- պատրաստել բարդ ոսկերչական տարրեր (օրինակ՝ մեխանիզմներ)՝ միացնելով երկու կամ ավելի ոսկերչական տարրեր՝ օգտագործելով համապատասխան թանկարժեք մետաղից գոդումներ և գոդման ճիշտ եղանակներ,
- օգտագործել ատամիկներ պատրաստելու և տաշելու տեխնիկաները,
- պատրաստել ամբողջական ոսկերչական կտորներ՝ երկու կամ ավելի պարզ կամ բարդ ոսկերչական տարրեր միմյանց հարմարեցնելով կամ միացնելով՝ օգտագործելով թանկարժեք մետաղներից գոդումներ՝ միաժամանակ գոդումները ճիշտ ձևով օգտագործելով,
- պատրաստել թանկարժեք մասեր թանկարժեք գունավոր քարերի համար, նաև անհրաժեշտ գիտելիք ունենալ թանկարժեք քարերի հետ աշխատելու տեխնիկաների մասին.
- պատրաստել այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են միացումները, ծխնիները, ճարմանդները և ճնշման փականները,
- կիրառել պտուտակման և պտուտակավոր կտրման տեխնիկաները

Մակերեսի ձևավորում

Մրցակիցը պետք է հստակ պատկերացում ունենա՝

- հիմնական ձևավորման և հղկման/փայլեցման մեթոդների և տեխնիկաների մասին,
- մակերեսի ձևավորման վրա հղկման միջոցների տարբեր տեսակների ազդեցության մասին,
- լավագույն ձևավորմանը հասնելու գործընթացների, գործիքների և տեխնիկաների մասին,
- մակերեսների թերությունների/անկատարությունների և դրանք վերացնելու տեխնիկաների մասին:

Մրցակիցը պետք է կարողանա՝

- պատրաստել ոչ ռեֆլեկտիվ մակերեսային ձևավորումներ, որոնք անհրաժեշտ են տարրերը ոսկերչին կամ թանկարժեք քարերի մասնագետին փոխանցելու համար,
- ճիշտ օգտագործել ASA 800 հղկաթուղթը (ամերիկյան ստանդարտը) կամ դրա համարժեքը:

Առողջապահություն և անվտանգություն

Մրցակիցը պետք է հստակ պատկերացում ունենա՝

- մեքենաների և գործիքների հետ աշխատելու և դրանց պահպանման մասին,
- բնական և պրոպան գազի, թթվածնի, էլեկտրականության, թթուների և քիմիական պարագաների օգտագործման ռիսկերի մասին,

Մրցակիցը պետք է կարողանա՝

- կիրառել ճիշտ առողջապահական և անվտանգության պահանջներն ու գործընթացները,
- օգտագործել պահանջված պաշտպանիչ միջոցներն ու հագուստը,
- հաշվի առնել հյուրընկալող երկրի առողջապահության և անվտանգության կանոնները:

2.2 Տեսական գիտելիք

2.2.1 Տեսական գիտելիքը պարտադիր պայման է, սակայն այն բացահայտ կերպով չի ստուգվում:

2.2.2 Կանոնների և կանոնակարգերի իմացությունը չի ստուգվում:

2.3 Գործնական աշխատանք

- Պատրաստել որևէ զարդ կամ դրա մի քանի տարր՝ տեխնիկական գծագրին համապատասխան: Տես՝ Հավելվածները, ՀՀՄԿ2011-ի գծագրերի նմուշների համար:
- Ոսկերչական հմտությունների և արտադրական տեխնիկայի կիրառում:
- Մշակել նախագծի բնութագրերը
- Օգտագործել միայն տրված հումքը:

3. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

3.1 Փորձարկման նախագծի ֆորմատը/կառուցվածքը

Առանձին գնահատվող ենթանախագծերով կամ բաղադրիչներով նախագիծ է:

3.2 Փորձարկման նախագծի նախագծման պահանջները

Գծագիրը պետք է հասանելի լինի առնվազն JPG կամ PDF ձևաչափով: Գծագրերի պրոեկցիայի համար տես՝ ISO 128, առաջին կամ երրորդ անկյան պրոեկցիա: Ամեն մոդուլի համար պրոեկցիաները պետք է լինեն A4 թղթի վրա, մասշտաբը՝ 1:1:

Եթե կա անհրաժեշտություն, կարող են նաև ներառվել հատումները և եռաչափ պատկերումները:

Ամեն մեկ մոդուլի մեջ առնվազն չորս և առավելագույնը տասը չափումներ պետք է հստակ ներկայացվեն նկարի մեջ՝ գնահատման նպատակներով:

Փորձարկման նախագծի առաջարկները պետք է ընդգրկեն նյութերի ամբողջական ցուցակը:

Նյութերի ցուցակը պետք է վերջնական տեսքի բերվի քվեարկության միջոցով, ֆորումում, 2013թ-ի մրցույթից առաջ:

Գնահատման ձևերը՝ Օբյեկտիվ գնահատում, Սուբյեկտիվ գնահատում, Գնահատման ամփոփում

Եթե ընտրվում է մետաղի ամբողջական 1:1 նախատիպը այն ևս պետք է ներկայացվի առաջարկի հետ:

3.3 Փորձարկման նախագծի մշակումը

Փորձարկման նախագիծը պետք է ներկայացվի, օգտագործելով ՀՀՄԿ կողմից տրամադրած շաբլոնները: ([www.worldskills.org\competition preparation](http://www.worldskills.org/competition_preparation)).

Word շաբլոնն օգտագործվում է տեքստային փաստաթղթերի համար իսկ DWG շաբլոնը՝ գծագրերի համար:

3.3.1. Ով է մշակում փորձարկման նախագիծը/մոդուլը

Փորձարկման նախագծերը/մոդուլները մշակում են.

Բոլոր փորձագետները:

3.3.2. Ինչպես և երբ է մշակվում փորձարկման նախագծի մոդուլը

Անկախ եղանակով:

3.3.3. Երբ է մշակվում փորձարկման նախագիծը

Այն մշակվում է արդեն ներկայացված ժամանակացույցի համաձայն.

| Ժամկետ | Գործողություն |
|---------------------------------|--|
| Մրցույթից առաջ | Փորձարկման նախագծի առաջարկները մշակվում և բերվում են նախորդ մրցույթ Ընտրվում են հինգ փորձարկման նախագծեր |
| Անմիջապես Նախորդ մրցույթից հետո | Ընտրված հինգ փորձարկման նախագծերը շրջանառվում են ՀՀՄԿ ինտերնետային կայքում |
| Նախորդ մրցույթից 9 ամիս առաջ | Նյութերի ցուցակը վերջնական տեսքի է բերվում ֆորումի ժամանակ |
| Մրցույթի ընթացքում | Հինգ շրջանառված առաջարկներից խաղարկության միջոցով ընտրվում է մեկ փորձարկման նախագիծ Ընտրված փորձարկման նախագծում արվում է 30% փոփոխություն: |

3.4. Փորձարկման նախագծի գնահատականների սանդղակը

Յուրաքանչյուր փորձարկման նախագիծ պետք է ունենա գնահատման սանդղակ՝ հիմնված Բաժին 5-ում սահմանված գնահատման չափանիշների վրա:

3.4.1. Գնահատման սանդղակը մշակվում է փորձարկման նախագիծը մշակող անձանց կողմից: Մանրամասն և վերջնական գնահատման սանդղակը մշակվում և համաձայնեցվում է բոլոր մրցակիցների կողմից, մրցույթի ժամանակ:

3.4.2. Գնահատման սանդղակները մուտքագրվում են ՄՏՀ, նախքան մրցույթը:

3.5. Փորձարկման նախագծի վավերացումը

Ներկայացվում է մետաղից պատրաստված ավարտված փորձարկման նախագծի օրինակ

3.6. Փորձարկման նախագծի ընտրությունը

Փորձարկման նախագիծն ընտրվում է հետևյալ կերպ՝

- 2013-ի համար. Ընտրվել է հինգ փորձարկման նախագիծ ՀՀՄԿ 2011-ում, որոնցից ընտրություն կկատարվի խաղարկության հիման վրա, մրցույթի ընթացքում, նախքան է 30% փոփոխությունները
- 2015-ի համար. հմտության քննարկման ֆորումում

Մրցույթից մինչև երեք ամիս առաջ փորձագետները ներբեռնում են փորձարկման նախագծերը (օգտագործելով ՀՀՄԿ փորձարկման նախագծերի առաջարկված շաբլոնները և ֆորմատը, ներառյալ բոլոր մոդուլների համար ավարտուն նմուշների լուսանկարները և 3D ֆայլերը) ոսկերչության ֆորումում:

Քննարկման ֆորումում փորձագետները մրցույթից մեկ ամիս առաջ քվեարկությամբ ընտրում են երեք նախագիծ: Քվեարկության կանոնների համար տես հավելված 7:

Ընթացիկ մրցույթում

Մրցույթ ժամանելուց հետո մրցույթի համար փորձարկման նախագիծն ընտրվում է վիճակահանությամբ՝ տրված երեք նախագծի առաջարկներից, նախքան 30% փոփոխությունը:

3.7 Փորձարկման նախագծի շրջանառումը

Փորձարկման նախագիծը շրջանառվում է ՀՀՄԿ ինտերնետ կայքով, հետևյալ կերպ՝

Ներկայացվել են նախորդ մրցույթում տեխնիկական տնօրենին՝ անհապաղ շրջանառության համար:

3.8 Փորձարկման նախագծի համակարգումը (մրցույթին նախապատրաստումը)

Փորձարկման նախագծի համակարգումը ստանձնում է՝

Գլխավոր փորձագետը, գլխավոր փորձագետի տեղակալը և այն անդամ երկրի/տարածաշրջանի նշանակված փորձագետը, որի փորձարկման նախագիծն ընտրվում է

3.9 Փորձարկման նախագծի փոփոխումը մրցույթում

Մրցույթի ընթացքում ընտրված փորձարկման նախագծի առնվազն 30%-ը պետք է փոփոխվի: Մրցույթի վայրում ընտրված փորձարկման նախագծում պետք է կատարվեն հետևյալ փոփոխությունները, որպեսզի բացառեն ցանկացած հնարավորություն, որ մրցակիցներն իրենց հետ պատրաստի արտադրանք բերեն զնահատման համար՝

- Ընտրված նախագծի գծագրում կատարվում է $\leq 30\%$ մեծացում/փոքրացում՝ տրված X Y Z առանցքներում, ինչպես նաև բաղադրիչների համար կամ քարի համար, որը նախատեսված է շրջանակի համար
- $\leq 30\%$ մեծացում/փոքրացում՝ տրված նախագծի գծագրում, որոշակի տեխնիկական տարրի կրկնության քանակի համար (օրինակ անցքերի քանակը)
- Քարի ձևի փոփոխություն, որի համար նախատեսված է եղել շրջանակը, պահելով նրա ծավալը $\leq 30\%$ -ի սահմաններում, ինչպես ներկայացված է եղել ընտրված փորձարկման նախագծում
- 30%-ից բարձր ցանկացած փոփոխություն, ներառյալ վերոգրյալի միավորումը, որը պահպանում է տեխնիկական տարրերը, որոնք պետք է լրացվեն փորձարկման նախագծի պահանջով, ինչպես նաև՝ բավարարեն գեղագիտական ընդհանուր պահանջները և որոնք չեն պահանջում տրամադրվող մետաղի քանակության ավելացում կամ պակասեցում

3.10 Նյութերի և ապրանքների առանձնահատկությունները

Նախօրոք որոշված մետաղների ցուցակը կմշակվի, ըստ որի պետք է կազմվեն փորձարկման նախագծերի բոլոր առաջարկները:

Նյութերի ցուցակը վերջնական տեսքի կբերվի և կքվեարկվի ֆորումում, 2013-ի մրցույթից ինն ամիս առաջ

4. ՀՄՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Քննարկման ֆորում

Մրցույթից առաջ տվյալ հմտությանը վերաբերող բոլոր քննարկումները, հաղորդակցությունները, համագործակցությունները և որոշում կայացնելը պետք է լինեն հմտությանը բնորոշ քննարկման ֆորումում (www.worldskills.org/forums): Հմտությանը բնորոշ բոլոր որոշումները և հաղորդակցությունները վավերական են միայն այն դեպքում, եթե նրանք տեղի են ունենում ֆորումում: Գլխավոր փորձագետը (կամ գլխավոր փորձագետի կողմից նշանակված փորձագետը) կլինի տվյալ ֆորումի միջնորդը: Հաղորդակցության ժամանակացույցը և մրցույթի ընթացքի վերաբերյալ պահանջները տես՝ մրցույթի կառններում:

4.2. Մրցակցի մասին տեղեկատվություն

Գրանցված մրցակիցների մասին ողջ տեղեկատվությունը հասանելի է մրցակցի կենտրոնից՝ (www.worldskills.org/competitorcentre) ինտերնետային կայքում:

Այս տեղեկատվությունը ներառում է

- Մրցույթի կանոններ
- Տեխնիկական բնութագրեր
- Փորձարկման նախագծեր
- Մրցույթի հետ կապված այլ տեղեկություններ

4.3. Փորձարկման նախագծեր

Շրջանառվող փորձարկման նախագծերը հասանելի կլինեն (www.worldskills.org/testprojects) ինտերնետային կայքում և մրցակցի կենտրոնում՝ (www.worldskills.org/competitorcenter) ինտերնետային կայքում:

4.4. Ամենօրյա կառավարում

Ամենօրյա կառավարումը բնորոշված է հմտությունների կառավարման ծրագրում, որը կազմված է գլխավոր փորձագետի կողմից ղեկավարվող հմտությունների կառավարման թիմի կողմից: Հմտությունների կառավարման թիմի կազմում են ժյուրիի նախագահը, գլխավոր փորձագետը և գլխավոր փորձագետի տեղակալը: Հմտությունների կառավարման ծրագիրը մշակվում է աստիճանաբար, մրցույթից առաջ վեց ամիսների ընթացքում և ավարտվում է մրցույթի ժամանակ, փորձագետների համաձայնությամբ: Հմտությունների կառավարման ծրագիրը կարելի է տեսնել փորձագետի կենտրոնի (www.worldskills.org/expertcentre) ինտերնետային կայքում:

5. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այս բաժնում նկարագրված է, թե ինչպես պետք է փորձագետները գնահատեն փորձարկման նախագիծը/մոդուլները: Այստեղ նաև ներկայացված են գնահատման առանձնահատկությունները և գնահատական նշանակելու գործընթացներն ու պահանջները:

5.1. Գնահատման չափանիշները

Այս բաժինը բնորոշում է գնահատման չափանիշները և շնորհված գնահատականների քանակը (սուբյեկտիվ և օբյեկտիվ): Գնահատման բոլոր չափանիշների համար գնահատականների ընդհանուր քանակը պետք է լինի 100:

| Բաժին | Չափանիշ | Գնահատական | | |
|-------|---------------------------------|-----------------------------------|----------|-----------|
| | | Սուբյեկտիվ (եթե կիրառելի է) | Օբյեկտիվ | Ընդհանուր |
| A | Գծագրին/ֆունկցիային նմանություն | 20 | 0 | 20 |
| B | Մոդուլ-նախշագարդում | 20 | 0 | 20 |
| C | Զոդում | 20 | 0 | 20 |
| D | Մակերեսի ձևավորում | 10 | 0 | 10 |
| E | Մեծություններ | 0 | 20 | 20 |
| F | Ավարտվել է ժամանակին | 0 | 10 | 10 |
| | Ընդամենը | =70 | 30 | 100 |

5.2. Սուբյեկտիվ գնահատում

Միավորները տրվում են 1-ից 10 սանդղակով

Սուբյեկտիվ գնահատման ցուցադրումը կլինի նախքան գնահատումը սկսելը:

5.3 Հմտությունների գնահատման առանձնահատկությունը

Չափանիշ Ա: Գծագրի նմանության համար, փորձագետները սուբյեկտիվորեն կգնահատեն այն աստիճանը, թե որքանով է մրցակցի աշխատանքն արտացոլում փորձնական նախագծի նկարներում նկարագրված չափերն ու համամասնությունները: Աշխատանքի համար փորձագետները սուբյեկտիվորեն կգնահատեն, թե ինչ աստիճանի ճշգրտությամբ են աշխատում մրցակցի պատրաստած մեխանիզմներն ու ճարմանդները:

Չափանիշ Բ: Փորձագետները սուբյեկտիվորեն կգնահատեն մրցակցի աշխատանքի չափերը և տեխնիկական էլեմենտների արտաքին մակերեսի տեսքը՝ ներառյալ մետաղի հեռացումը (սղոցում, ֆրեզերում, գայլիկոնում, խարտում, և այլն):

Չափանիշ Գ: Փորձագետները սուբյեկտիվորեն կգնահատեն մրցակիցների՝ զոդման միջոցով տարրերն առանց գունաթափելու կամ սխալ իրար միացնելու հմտության աստիճանը, ինչպես նկարագրված է փորձարկման նախագծում:

Չափանիշ Դ: Փորձագետները սուբյեկտիվորեն կգնահատեն, թե ինչ աստիճանի համասեռ, չփայլեցրած ձև կունենա մրցակցի աշխատանքն՝ առանց նշանների, քերծվածքների կամ գունաթափության՝ Բ չափանիշով չգնահատված բոլոր մակերեսների վրա (ASA 800 հղկաթղթի ձևին համապատասխան: Արտադրամասի տարածքում կցուցադրվի երկու 20մմ-անոց 18կտ-անոց ոսկու կլոր, ողորկ կտոր՝ ցույց տալու ցանկալի մակերեսի ձևը):

Չափանիշ Ե: Փորձագետներն օբյեկտիվորեն կգնահատեն, թե արդյոք մրցակցի աշխատանքը համապատասխանում է փորձարկման նախագծում նշված չափումներին՝ թույլատրելի խախտումների հետ մեկտեղ:

Չափանիշ Զ: Փորձագետներն օբյեկտիվորեն կգնահատեն, թե արդյոք փորձարկման նախագծի նկարներում մասնավորեցված տարրերն ու տեխնիկական էլեմենտներն առկա են ու միանում են մեկը մյուսին նվազագույնը մեկ զոդումով կամ մեխանիկական միացմամբ, ինչպես նշված կլինի տեխնիկական նախագծում:

5.4 Հմտությունների գնահատման գործընթացներ

- Մրցույթին ներկա փորձագետները կբաժանվեն գնահատող խմբերի՝ աշխատելու գնահատման չափանիշների բոլոր բաժինների վրա:
- Մոդուլների դեպքում ցանկացած ավարտված մոդուլ/առաջադրանք/բաժին կգնահատվի ավարտվելուն պես:
- Թափանցիկությունն ապահովելու համար բոլոր մրցակիցներին տրվում է գնահատման նույն թերթիկը, որը փորձագետներն են օգտագործում:
- Փորձագետները մրցույթի ընթացքում կվերահսկեն մրցակիցներին, բայց նրանք չեն կարող նայել մրցակիցների աշխատանքներին, կամ որևէ պատկերացում ունենալ աշխատանքի առաջընթացի մասին, մինչև մոդուլը գնահատված չլինի:
- Մրցույթի յուրաքանչյուր օրվա վերջում արտադրամասի պատասխանատուն կհավաքի անավարտ աշխատանքները, կդնի դրանք անթափանց տուփերի մեջ՝ կնիքված և ստորագրված, որտեղ նաև կնշվի մրցակցի աշխատանքային համարը, երկրի կոդը: Այն պահվում է չհրկիզվող պահարանի մեջ կամ ապահով սենյակում: Չհրկիզվող պահարանի կամ ապահով սենյակի բանալին կամ գաղտնագիրը պետք է լինի որևէ չեզոք անձի մոտ, որին նշանակում են փորձագետները:
- Յուրաքանչյուր օրվա վերջում փորձագետների կողմից նշանակված չեզոք անձը պետք է լուսանկարի մրցակիցների մետաղները, որպեսզի նրանք չկարողանան որևէ մաս ավելացնել կամ փոխարինել: Այս լուսանկարները ևս պետք է պահվեն չհրկիզվող պահարանի մեջ կամ ապահով սենյակում:
- Յուրաքանչյուր մոդուլի վերջում գնահատման առարկաները պետք է կնիքվեն և դրվեն անթափանց բացիկների մեջ՝ դրանց վրա գրելով մրցակցի անունը, աշխատանքային համարը և երկրի կոդը:
- Գնահատման համար գնահատման առարկաները անանուն կերպով կպիտակավորվեն 2 չեզոք անձանց կողմից (աշխատանքային տոնավաճառի պատասխանատուն ներառյալ) և փորձագետները կգնահատեն դրանք՝ առանց իմանալու, թե ով է տվյալ աշխատանքի հեղինակը:

6. ՀՄՏՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Տես հյուրընկալող երկրի կանոնների համար սահմանված հյուրընկալող երկրի առողջապահության և անվտանգության փաստաթղթերը:

- Մրցակիցները պետք է կրեն թափանցիկ, աչքերի պաշտպանման ակնոց, եթե դա պահանջվում է
- Պրակտիկ հագուստ, որը ծածկում է մարմինը մինչև ծնկները, օրինակ՝ զոզնոց կամ հատուկ հագուստ
- Արտադրամասի տարածքում հագնել փակ կոշիկներ

7. ԼՅՈՒԹԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

7.1 Ենթակառուցվածքի ցուցակը

Ենթակառուցվածքի ցուցակը ներկայացնում է հյուրընկալող երկրի կողմից տրամադրված սարքավորումների, նյութերի և այլ հարմարությունների մանրամասները: Ենթակառուցվածքի ցուցակը կարելի է առցանց տեսնել www.worldskills.org/infracture ինտերնետային կայքում:

Ենթակառուցվածքի ցուցակը հատկորոշում է իրերը և դրանց քանակությունը, որը պահանջվում է փորձագետների կողմից հաջորդ մրցույթի համար: Մրցույթի կազմակերպիչը պետք է աստիճանաբար թարմացնի ենթակառուցվածքի ցուցակը հատկանշելով իրերի փաստացի քանակը, տեսակը, ապրանքանիշը և մոդելը: Մրցույթի կազմակերպիչի կողմից մատակարարված իրերը ներկայացված են առանձին սյունակում:

Յուրաքանչյուր մրցույթում փորձագետները պետք է վերանայեն և թարմացնեն ենթակառուցվածքի ցուցակը, հաջորդ մրցույթին նախապատրաստվելու համար: Փորձագետները պետք է տեղեկացնեն տեխնիկական տնօրենին տարածքը մեծացնելու և/կամ սարքավորումներն ավելացնելու անհրաժեշտության մասին: Յուրաքանչյուր մրցույթում տեխնիկական դիտորդը պետք է աուդիտի ենթարկի ենթակառուցվածքի ցուցակը, որն օգտագործվել էր տվյալ մրցույթում:

Ենթակառուցվածքի ցուցակը չի ընդգրկում այն իրերը/առարկաները, որոնք մրցակիցները կամ փորձագետները պետք է բերեն, ինչպես նաև այն առարկաները, որոնք մրցակիցներին չի թույլատրվում բերել:

Դրանք ներկայացված են ստորև:

7.2. Նյութեր, սարքավորումներ և գործիքներ, որոնք մրցակիցները բերում են իրենց արկղերում

Գործիքների արկղերի չափը

Գործիքների արկղերը, որոնք մեծ են 0.25 մ³-ից, չեն թույլատրվի արտադրամասի տարածք՝ մրցույթի ընթացքում:



Ծավալը չափվում է հետևյալ կերպ՝ արկղի հատակից մինչև գագաթ X լայնություն X խորություն: Անիվները կարելի է հեռացնել:

Չսպառվող նյութեր, սարքավորումներ և գործիքներ, որոնք բերում է Մրցակիցը

| Քանակ | Նկարագիր |
|-------|---------------------------|
| 1 | Ձեռքի ֆայլերի հավաքածու |
| 1 | Մրաձայր ֆայլերի հավաքածու |
| 1 | Կլորացնող մուրճ |
| 1 | Պողպատե բլոկ |
| 1 | Սղոցի շրջանակ |
| 1 | Հարթաշուրթերի հավաքածու |
| 1 | Նշագծող գործիք |
| 1 | Քառակուսի/քանոն |
| 1 | Չափող քանոն |
| 1 | Կողմնացույց, բաժանիչներ |
| 1 | Սեղանի ամրակ |
| 1 | Զողման պինցետ |
| 1 | Զողալամպ |
| 1 | Զողման բլոկ |
| 1 | Թափանցիկ պաշտպանիչ ակնոց |
| 1 | Հորատադուր/փորագրիչ |
| 1 | Քերիչ |
| 1 | Խոշորացույց |
| 1 | Մագնիս |

Ներկայացված քանակությունները խորհուրդ է տրվում որպես նվազագույն, մրցակիցները կարող են բերել մեկից ավելի:

Լրացուցիչ գործիքները, որոնք թվարկված չեն, թույլատրվում են միայն ամբողջ արկղի ստուգումից հետո:

Սպառվող առարկաներ, որոնք բերվում են Մրցակցի կողմից

| Քանակ | Նկարագիր |
|-------|---|
| 1 | Շրջանաձև սղոցներ |
| 1 | Ծեփամածիկ |
| 1 | Զողման մածուկ/հեղուկ |
| 1 | Հրակայուն մածուկ |
| 1 | Հղկաթղթի հավաքածու |
| 1 | Ֆրեզեր/Ֆրեզերային գործիք/անհարթություններ |
| 1 | Տարբեր չափերի շաղափ |
| 1 | Սվաղ |
| 1 | Պեմզա/պեմզա քարի փոշի |
| 1 | Մաքրող ապրանքներ, առանց թթվի |
| 1 | 0.25 մմ կարելու լար (60 սմ) |
| 1 | 1 մմ պղնձաթիթեղ 15x15 |
| 1 | 600 հղկաթուղթը (ամերիկյան ստանդարտը) կամ դրան համարժեք 20 |

Ներկայացված քանակությունները խորհուրդ է տրվում որպես նվազագույն Մրցակիցները կարող են բերել մեկից ավելի:

Ծանոթություն: Թթուն կտրամադրվի մրցույթի կազմակերպչի կողմից և կներկայացվի ենթակառուցվածքի ցուցակում: Մրցակիցները չեն կարող օգտագործել այլ թթու: Ապրանքանիշի և նյութերի անվտանգության մասին տվյալների թերթիկը չոր թթվի համար հասանելի կլինի մրցույթից վեց ամիս առաջ:

7.3 Փորձագետների կողմից մատակարարվող նյութեր, սարքավորումներ և գործիքներ

Չկան

7.4. Նյութեր և սարքավորումներ, որոնք արգելված են տվյալ հմտության տարածքում


- Փորձարկման նախագծում օգտագործվող նյութեր au 750/00 (18kt) դեղին կամ սպիտակ ոսկի և դրանց գողիչները
- Գործիքներ՝ նախօրոք ձևավորված՝ Փորձարկման նախագծի համար. դեղին կամ սպիտակ ոսկեջրած ցանկացած մետաղ

7.5. Առաջարկվող արտադրամասի և աշխատանքային սխեման

Աշխատավայրերը կբաշխվեն վիճակահանության միջոցով, ծանոթացման ժամանակահատվածը սկսվելու ժամանակ:

Լոնդոնի արտադրամասի սխեմաները հասանելի են http://www.worldskills.org/index.php?option=com_halls&Itemid=540 ինտերնետային կայքում:

Արտադրամասի սխեման



8. ՀՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

8.1 Ինչպես առավելագույն ներգրավել այցելուներին և լրատվամիջոցներին

Այցելուների և լրատվամիջոցների ներգրավումը ընդլայնելու համար անհրաժեշտ է հետևյալը.

- Փորձեք գործարք կատարել (այցելուների համար նախատեսեք նստարաններ և գործիքներ, որպեսզի նրանք կարողանան փորձել ոսկերչության ամենապարզ տեխնիկաները)
- Մրցակցի խցիկ – յուրաքանչյուր մրցակցի աշխատավայրի վերևում ֆիքսված խցիկ՝ կենտրոնական տեսադաշտով
- Փորձարկման նախագծի նկարագրություններ
- Մրցակցի գործունեության խորը ըմբռնում
- Մրցակցի պրոֆիլներ, հետաքրքրություններ, ուսուցում և կրթություն, օրինակ՝ կրթության տևողությունը
- Աշխատանքային հնարավորություններ- կարող է տարբերվել յուրաքանչյուր անդամ երկրի համար
- Մրցույթի կարգավիճակի մասին ամենօրյա հաղորդումներ- պրոգրեսիվ գնահատումը հնարավորություն կտա մեծացնել հանդիսատեսի հետաքրքրությունը
- Թանկարժեք մետաղի արվեստի պատմություն- կրթական գրքույկ, որտեղ մանրամասն ներկայացված է ոսկերչության արտադրության պատմությունը և, թե ինչպես է այն կապված ժամանակակից փորձի հետ, մասնավորապես այն տեխնիկաները, որոնք ներկայումս օգտագործում են մրցակիցները
- Աուդիո տեսա-ցուցադրումներ, բացատրելով նախագիծը և դասակարգված տեղեկատվություն հասարակության համար

8.2. Կայունությունը

- Մշակում
- “Կանաչ” նյութերի օգտագործումը
- Մրցույթից հետո ավարտված փորձարկման նախագծերի օգտագործում
- Էներգիան խնայող լուսավորություն
- Նախօրոք որոշված նյութերի ցուցակ
- Նախօրոք որոշված գործիքների արկղի չափսերը:

9. Հավելված

9.1 Տեխնիկական գծագրերի նմուշ

